

չասանը պիտի փրկեր ու տիրեր անոր, իբր յաջորդ Բագրատունեաց : Շանամիրեանի փայփայած երագն այ աս էր արդեն . . . (*) :

286. **Արքայա Ծառուր Ալաշլախանց** քաղցին երեսկիներն էր, որ Շանամիրեանի, Շմառնեանի պես Հնդկանայուն բարեշուքներ կր բաղձար՝ մամուլի և զիրքի շնորհի : Այդ առաջադրութեամբ էր որ Շիրազեցիին կենդանութեանն իսկ «նորակերտ տպարան» մը բացաւ ուրիկ յոյս բնծայուած գիրքերը եղան . **Թանգարան բաւեարդ** (Պետր. Վ. Պուռնազեան) 1809, **Ողբ Նդեխոյ** (Ն. Շնորհալի) 1810, **Հասակեցէք կամ Սրբազնագործուրիւն** (Ջուղայեցի Յովհ. Վրդ.) 1812, **Ողբերգուրիւն** ի վերայ մամուան Յուլիոսի (բրգմ. Անգլ. Յ. Ն. Շամիրեան) 1818 :— Այս բուսականն անդին նայ տպարան գոյուրիւն չունենար ի Մատրաս, մինչ



Ս. ԱՂԱՅԱՆԵԱՆՑ

ԱՆՆԱՄԱՆՅԻ ԵՒ ՊՕՄՊԱՆՅԻ
Հնդկանայք տենդագին գործունեութեան շրջան մը բոլորած են մինչեւ 1870 բուսականի սկիզբները, որմէ յետոյ անգլ. հզօր տիրապետութեան տակ նեղցնեալ կորուսած իրենց մայրենի բարբառը՝ մտաւոր զարգացումին կ'ստանան այլ եւս անգլ. րերերով ու գիրքերով :— 1 Ապր. 1908 ին նայազգի մը՝ Կ. Ն. Գարսնի կ'սկսի նրատարակել The Armenian կիսամետայ հանդէսը : 1895 ին Մետրովզ Յ. Սեր հնդկանայք History of Armenians in India խորագիրով ուշագրաւ գործ մը յոյս բնծայած է Կալկարայի մէջ, Հնդկանայ կեանքը խոյճմտօրէն նայելացունելով, որուն մէջ յիշած է նաեւ տեղւոյն գաղութին տպարանական գործունեութիւնն ալ :— Հնդկանայք բողջով դեպ ի նայ գրականութիւն իր դասն ուժացումին մէջ, դասնանք երբեմնի տպարանական իր փայլուն տարիներուն :

287. **Յովսէփ Բնչոյ. Առեփանոսեան.**— Մատրասի «Ազգարար»ը դադրած տարին, նրատարակչին՝ Կալկարա բնակող այս պաշտօնակիցը խեղճ տպարան մը կը բարայ քաղցին Ս. Նազարէր ժամին բակը . հոն կը դրոշմէ **Պատմութիւն անցից . . . առ Նասրահ աբաշին Պարսիցը** որ Քրեւսի ալ բարգամեուած է և զոր շարադրած է յոյն մօրմէ կրեալ ծնած՝ Ռօտօսրոյի առաջնորդ՝ ապա կարող. Արքանաւ Սրբազան : Յովսէփ քահանայ արուեստի հասկացողութենէ բոլորովին զուրկ կ'երեւի :

288. **Տպ. «Օճանասփիւռեան», ի +** — 1810 ին ՊՕՄՊԱՅ քաղցին մէջ յոյս տեսնող համանուն վիստախ պերքէն զատ՝ հոն նրատարակուած է **Ծաղկասօսն** (1822) և Յ. Ավդալեանի **Մօշիկը** (1823) որուն ճակատը կը կարդանք . «Տպագրեալ ծախիւք Օճանակաց տպարանին . . . ի Կալկարա . . . յՕճանասփիւռեանց տպարանի» : Ասկէ կը հասկցուի թէ րերը Պօմպայ, իսկ միւս 2 գիրքերը՝ րերքին տպագրատան անուամբ Կալկարա դրոշմուած են :

289. **Ջինթլում Աւետեան** (կամ **Աւետ Զերլումեան**) որ նեղինակ ալ է, 1811 ին տպած է իր սեպն. գործատան մէջ **Նոր սեռակ այբուբենական** (որուն յառաջաբանով կը խոստովանի իր անգլուստ եռանդը կիւրեմակերկի արուեստի մասին), **Տասն պատգամք**, 1813 ին **Ծաղկակալ** (այլաբանագր., պատմ., և տարեցոյց), 1814 ին **Գիւտ կովային պիտակին** (բրգմ. անգլ.), 1815 ին **Համառօտ սրգիսուրիւն եկեղեցոյ** (Մարգար Խօճնեց) :

(*) **Ազգարար** Բ. անգամ նրատարակուած է ՄԱՏՄԱՍ 1846ին, վերատպութեամբ Ս. Պ. Յովհաննէսեանի ու 2 արի վերջ կը հանէ **Բանասեր** : ** ՍԻՆԿԱՓՈՒՐԻ մէջ ալ 1843ին ունեցած են վիստախ րեր մը, **Ռուսմանաւր** : ** Տրեքնէֆ նաեւ ԿԱԼԿԱՓԱ նրատարակուած **Շեմարանը** (1810), **Հայելին** (1816), **Հայրենասերն ու եղբարանը** (1862), վերջինս՝ Եղիազար Տէր Յարութիւնեանի կողմէ : ** Իսկ **Ազգասեր**ը տե՛ս ԱՆՆԱՄԱՆՅԱՆ Բնկերութեան սպարանին մէջ :